Նորիկ Սարգսյան
Պատմական գիտությունների թեկնածու

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նախկին ԽՍՀՄ-ի բոլոր ազգերը սկսեցին վերաշարադրել իրենց պատմությունը, այն մաքրել մարքս-լենինյան մեթոդաբանությունից, ինչպես նաև պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներից: Որոշ ազգեր, օրինակ՝ հայերը, փորձեցին վերականգնել և պաշտպանել պատմական արդարությունը, իսկ ոմանք էլ, մասնավորապես Ադրբեջանի թուրքերը շարունակեցին կեղծել պատմությունը, պղտորել պատմությունը սնող սկզբնաղբյուրները, որպեսզի հարևան ազգերի հաշվին կերտեն իրենցը՝ սեփականը: Ադրբեջանի պատմաբանների նպատակն է օրինականացնել պատմական Հայաստանի մի մասի յուրացումը, վերադարձնել Արցախն ու հայերի կողմից ազատագրված տարածքները: Այս ճանապարհով Փոքր Ասիայի և պատմական Հայաստանի տարածքում ստեղծվել են երկու թուրքական պետություններ: Սա, փաստորեն, ցեղասպանության քաղաքականության շարունակություն է: Ցեղը ոչնչացնելուց կամ բռնագաղթի ենթարկելուց հետո սկսվում է տարածքի յուրացումը: Եվ որպեսզի այդ յուրացումը կամ սեփականացումը ավարտին հասցվի և հանցագործության հետքերը մաքրվեն, անհրաժեշտ է սեփականացնել նաև ցեղասպանության ենթարկված կամ արտագաղթած ազգի մշակույթն ու պատմությունը, այսինքն՝ զբաղվել կեղծարարությամբ: Ի դեպ ժամանակն է, որ ՄԱԿ-ը ընդունի «Մշակույթի և պատմության կեղծարարությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին կոնվենցիա»: Այլապես պատմամշակութային կեղծ հողի վրա իրար հարևան ազգերը դաստիարակում են փոխադարձ թշնամանքով սերունդներ, ինչը պատճառ է դառնում տեղական պատերազմների և խաթարում է տվյալ տարածաշրջանի խաղաղությունը:

20-րդ դարի վերջից սկսած ցայսօր Ադրբեջանի պատմաբաններն ու մտավորականները ակտիվացրել են պատմության կեղծարարության գործընթացը: Հաստատվելով Կուր գետի աջ ափին՝ Մեծ Հայքի հյուսիս-արևելյան նահանգներում, ինչպես նաև Կուր գետի ձախ ափին՝ իրենց էթնոսի հետ բացարձակապես կապ չունեցող նախկին Ալբանիայի տարածքում, թուրքերը այժմ հավակնություններ ունեն նաև ներկայիս Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության տարածքների նկատմամբ: Որո՞նք են այն կռվանները, որոնց հենքի վրա նրանք փորձում են հիմնավորել իրենց կեղծ ու շինծու հայեցակարգերը: Դրանք, ըստ իս, երեքն են:

1. Ցարական, իսկ հետո Խորհրդային Ռուսաստանի վարչատարածքային բաժանումներն ու հակահայկական պայմանագրերը (1918 թ. Բրեստի, 1920 թ. Ալեքսանդրապոլի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի):

19-րդ դարում, Անդրկովկասը գրավելուց հետո, Ռուսաստանը իրականացրեց մի քանի գաղութային վարչական ռեֆորմներ, որոնց հետևանքով Անդրկովկասում հայկական տարածքների և բնակչության զգալի մասը ընդգրկվեցին Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգներում: Հայաստանի առաջին Հանրապետությանը չհաջողվեց

իրականացնել հողահավաք և ազգահավաք, քանզի այդ ծրագրերի դեմ էին գործում բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան: Խորհրդային Ռուսաստանը 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիային զիջեց Հայաստանի մեծ մասը, իսկ Ադրբեջանին և Վրաստանին՝ հայերով բնակեցված հայկական որոշ տարածքներ: Դրանով Խորհրդային Ռուսաստանը լուծեց հետևյալ խնդիրները.

ա. Հայերի միջոցով սանձեց Վրաստանի և Ադրբեջանի անջատողականությունը:

բ. Ադրբեջանին տալով Նախիջևանը և Ղարաբաղը՝ միաժամանակ բավարարեց «եղբայրական» Թուրքիայի պահանջը:

գ. Թուրքիային զիջելով Հայաստանի մեծ մասը՝ կանխեց 1920 թ. օգոստոսի 10-ին Անտանտի և Թուրքիայի միջև կնքված Սևրի պայմանագրի կիրառումը, հետևաբար՝ Արևելյան Հայաստանի միացումը Արևմտյան Հայաստանին:

2. Ատրպատականում թուրքական էթնոսի առկայությունը:

Քանի որ այս հիմնահարցը մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է, ուստի քննենք խնդրին առնչվող միայն մեկ հոդված, որպեսզի ցույց տանք Ադրբեջանի քարոզչության նվաճողական բնույթը հարևանների տարածքների նկատմամբ, որը բխում է պանթուրքիզմի գաղափարախոսությունից: Ոմն Նուրանի իր "Армянская карта в иранской политике" հոդվածում գրում է, որ հայկական «նվաճողականությունը» Իրանի իշխանությունների կողմից կարող է հաջողությամբ օգտագործվել որպես «ոչ պաշտոնական հակադրություն» Հարավային Ադրբեջանի ազգային շարժման դեմ: Որպես հիմնավորում նա թվարկում է հայերի գործողությունների նկատմամբ Իրանի իշխանությունների հանդուրժողականությունը: Որպես փաստարկներ հոդվածագիրը բերում է բազմաթիվ օրինակներ: Մեջբերում կատարելով Ջամիլ Գասանլիի "СССР-Иран" գրքից՝ նշում է, որ երկրորդ աշխարհամարտից հետո, երբ խորհրդային զորքերը զբաղեցնում էին Հարավային Ադրբեջանը (Ատրպատականը և Պարսկահայքը- Ն.Ս.), Խորհրդային Հայաստանը փորձում էր Ադրբեջանի հետ կիսել Հարավային Ադրբեջանն այնպես, որ Թավրիզը անցնի Հայաստանին: Եթե հաշվի առնենք, շարունակում է Նուրանին, որ այդ տարիներին ԽՍՀՄ-ը հենվելով հայկական վաղեմի տարածքային հավակնությունների վրա՝ փորձում էր իրականացնել Թուրքիայի տարածքի մի մասի (Կարս, Արդահան, Արդվին-Ն.Ս.) զավթումը, ապա հայկական ակտիվությունը Հարավային Ադրբեջանում առիթ է տալիս հեռու գնացող կասկածների: Այնուհետև նա թվարկում է հետևյալ փաստարկները. Հյուսիսային Իրանից ընտրված պատգամավոր Գևորգ Վարդանյանի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին Իրանի խորհրդարանում հնչեցրած կոչը, Մեծ Հայքի քարտեզը, որտեղ ընդգրկված են նաև Իրանի Քուրդիստանը և Հարավային Ադրբեջանը, Թեհրանում հայերեն դասագրքերի հրատարակումը, որոնց մեջ իբր կեղծվում է Ադրբեջանի պատմությունը և այլ փաստարկներ: Հոդվածը վերջանում է հետևյալ դատողությամբ. պրոտոկոլային ժպիտները և այցելությունները դժվար թե քողարկեն պաշտոնական Թեհրանի անբարյացակամությունը Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ[1]:

---

[1] Нуранн, "Армянская карта" в иранской политике, http://www.centrasia.ru/newsA.php?st=1114289100, 24.04.2005

3. Հայերի վերաբնակեցումները և սփյուռքահայերի հայրենադարձությունը 19-20-րդ դարերում: Հայաստանաբնակ ադրբեջանցիների 1948-1952 թթ. վերաբնակեցումը:

1804-1813 և 1826-1828 թթ. Ռուս-պարսկական պատերազմների ժամանակ՝ մինչև 1928 թ., պարսկահայերի վերաբնակեցումը Ռուսաստանին անցած հայկական տարածքներում, Անդրկովկասի որոշ հայկական տարածքներում, Երևանի և Նախիջևանի խանություններում, ինչպես նաև Օրդուբադի շրջանում բնակչության մեծ մասը մահմեդականներ էին (ոչ միայն թուրքեր): Վերաբնակեցման պատճառը հայերի նկատմամբ իրականացվող հալածանքներն ու բռնագաղթերն էին (1604 թ. Շահ Աբաս 1-ի և 1826 թ. թագաժառանգ Աբաս Միրզայի կիրառած բռնագաղթերը): 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ և 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրի 13-րդ հոդվածների համաձայն Ռուսաստանին անցած հայկական տարածքներում իրականացվեցին 45 հազար իրանահայերի և 75 հազար արևմտահայերի վերաբնակեցումներ, որոնք, իրոք, փոխեցին տարածաշրջանի ժողովրդագրական կազմը հօգուտ հայերի: Սակայն սա բոլորովին չէր նշանակում, որ հայերն առավելություններ ունեին մահմեդականների նկատմամբ: Ավելին, մահմեդականները հայկական տարածքներում ավելի արտոնյալ պայմաններում էին, քան հայերը: Այս հանգամանքը չի վրիպել հայտնի պատմաբան Լեոյի դիտարկումներից: Նա գրում է. «Պարսկահայ գաղթականները, դեռ նույնիսկ չտեղավորված Արարատյան երկրում, Պասկևիչը նրանցից զորք էր պահանջում և, հավաքելով 2000, ուղարկում է պատերազմելու օսմանյան բանակի դեմ..... Այսքան արյունոտ պարտականությունները կատարում էր, այսքան ծանր զոհեր էր տալիս հայ ժողովուրդը լոկ, որպեսզի արժանանա հավասար վերաբերմունքի այն մահմեդական ժողովրդի հետ, որը իսպառ ազատ էր պարտականություններից ու զոհերից»[1]:

Պարսկահայերի 1828 թ. վերաբնակեցման մասին ադրբեջանցի լրագրող Իդայաթը «Գաղթականների նամակը» հոդվածում գրում է, որ այն պահից, երբ Երևանի խանությունը միացվեց Ռուսաստանին, բնակչության 73,8 տոկոսը ադրբեջանցիներ էին: Հետագա տարիներին, երբ այդ տարածքը անվանվեց «Հայկական մարզ», ադրբեջանցիների թիվը կրճատվեց և հասավ 58 տոկոսի: Նա այդ փաստը բավարար է համարում, որպեսզի պնդի, թե ներկայիս Հայաստանի տարածքը ադրբեջանական տարածք է, հետևաբար Հայաստանի Խորհրդային Հանրապետության ստեղծումը ապօրինի է համարում[2]:

Իսկ Սաբիր Ասադովը տրամաբանությունից զուրկ իր դատողությամբ գերազանցում է Իդայաթին: Նա մեջ բերելով Մագդա Նեյմանի «Հայերը» հայտնի գրքից Անդրկովկասի 19-րդ դարավերջի 20-րդ դարի ժողովրդագրական կազմը՝ ընդգծում է, որ ադրբեջանցի թաթարները թվով գրավում են երկրորդ տեղը՝ ռուսներից հետո, մինչդեռ հայերը՝ չորրորդ: Մեջ բերենք նշված գրքից Ս. Ասադովի բերած հատվածը և քննության ենթարկենք: Այսպես. «Ռուսաստանում հայտնված 1.200.000 հայերից Անդրկովկասում ապրում էին 985,460 հայեր: Կովկասում բնակվող ժողովուրդների մեջ հայերը գրավում էին միայն չորրորդ տեղը (ռուսներ-2.286.738 մարդ, ադրբեջանական թաթարներ-1,139,659, վրացիներ-1,201,256, հայեր-985,460)»[1]: Մագդա Նեյմանը այդ տվյալները վերցրել է «К армянскому вопросу в закавказе». «С. Пет. Вед.» 1897 г. 72: Նախ նկատենք, որ օտարերկրյա շատ հեղինակներ, այդ թվում ռուսները, Անդրկովկասի բոլոր մահմեդականներին ընդգրկում էին թաթարների կազմում, այլապես մյուս մուսուլման ազգերն էլ կհիշատակվեին: Երկրորդ, 19-րդ դարի վերջին Անդրկովկասում մոտ մեկ միլիոն հայերի առկայությունն արդեն լուրջ թիվ է: Երրորդ, գրքում խոսքը գնում է Անդրկովկասի, այլ ոչ թե հայկական տարածքների մասին, որտեղ հայերը գերակշռում էին բոլոր ազգերին, էլ չենք խոսում Թիֆլիսի և Բաքվի մասին, որտեղ գրեթե գերակշռում էր հայկական տարրը: Չորրորդ, Մագդա Նեյմանը բերելով այդ տվյալները՝ ցույց է տալիս, որ Անդրկովկասում հայերը թեև թվապես գրավում էին չորրորդ տեղը, բայց դպրոցներում սովորող աշակերտների թվով՝ առաջին տեղը[2]: Այս փաստը նույնպես չի կարող հիմք հանդիսանալ ներկայիս ՀՀ տարածքը ադրբեջանական համարելու համար:

Ահա այս հանգամանքը հաշվի չառնելով՝ թուրք-ազերի պատմաբանները երբեմն հենվում են օտարերկրյա, ինչպես նաև հայկական աղբյուրների ու գրականության վրա՝ համատեքստից անջատելով այս կամ այն հատվածը: Օրինակ, "Историческая география западного Азербайджана" (Баку, 1998) ժողովածուում օգտագործվել են Ն. Դուբրովինի «Закавказье в 1803-1806 гг», Ա. Լալայանի «Исторические записи (2-րդ մաս)», Զ. Կորկոտյանի «Խորհրդային Հայաստանի բնակչությունը», Թ. Հակոբյանի, Ստ. Մելիք-Բախշյանի և Հ. Բարսեղյանի «Տեղանունների բառարանը» (1-12 հատոր) և այլ աղբյուրներ ու գրականություն, որոնք օգտագործվել ու մեկնաբանվել են յուրովի՝ կեղծարարության սկզբունքով: Ի դեպ նշված ժողովածուն կազմել է Սաբիր Ասադովը՝ պատմաբան Բուդաղովի խմբագրությամբ, և լույս է տեսել Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հրահանգով: Գրքի ներածականում նախ հիշատակվում է Գ. Գեյբուլլաևի կողմից 1992 թ. լույս տեսած «Հին թուրքերը և Հայաստանը» գիրքը: Նշվում է, որ ներկայիս Հայաստանի տարածքում թուրքական էթնոսը ապրել է դեռևս մ.թ.ա. 8-7-րդ դարերում, որ այնպիսի շրջաններ, ինչպիսիք են Գեյչա, Զանգեզուր, պատմականորեն եղել են Ալբանական տարածքներ, որ Երևանի խանությունը հնագույն ժամանակներից համարվում է ադրբեջանական հող: Գրքի ներածականը վերջանում է հետևյալ եզրակացությամբ. Հայերը իրականացրել են «Հայաստանը առանց թուրքերի» քաղաքականություն, այն պահից, երբ նշված տարածքները միավորվել են Ռուսաստանին: Միայն վերջին հարյուր տարվա ընթացքում իրենց հարազատ վայրերից արտաքսվել են երկու միլիոն, իսկ 1905 և 1918 թթ.՝ 500 հազար ադրբեջանցի[3]:

Հայաստանի գիտնականներն իրենց մեկնաբանություններում, նույնիսկ դասագրքերում, չեն թաքցնում այն փաստը, որ պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան մի շարք շրջաններում մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալը, և 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին նաև Անդրկովկասում ազգաբնակչության զգալի մասը կազմել են մահմեդականներ (ոչ թե ազերիներ): Հայտնի է, որ պատմական որոշ փուլերում թուրքերը Արևմտյան Հայաստանում հայերին հակադրվելու նպատակով բնակեցրել են քրդերի, իսկ Պարսկաստանը ռուսական առաջխաղա-

[1] Լեո, Երկեր, 4-րդ հատոր, Ե., 1984, էջ 435:
[2] Իդայաթ, Գաղթականների նամակը, Беженцы 1918-1920, 1948-1952,1988-89, Баку-Гянджлик, 1992, стр. 39.

[1] Նույնը, стр. 84:
[2] Տե՛ս Магда Нейман, Армяне, Е., 1990. стр. 26:
[3] Տե՛ս Историческая география Западного Азербайджана, Б., 1998. стр. 6:

ցումը կասեցնելու նպատակով՝ թուրքերի: Այդ պատճառով, բնականաբար, պատմական Հայաստանի որոշ շրջաններում հայությունը հալածվել է և մեծամասնությունից դարձել է փոքրամասնություն, սակայն սա բոլորովին էլ չի նշանակում, որ այդ տարածքների տերերը թուրքերը կամ քրդերն են:՝

1905-1906 թթ. ցարական Ռուսաստանը քաղաքական և տնտեսական դրդապատճառներով (թուրքերն ու այլազգիները չէին կարողանում մրցակցել հայերի հետ) Անդրկովկասում հրահրեց հայ-թաթարական ջարդեր, որոնցից հիմնականում տուժեցին հայերը: Հայերի դեմ ուղղված ջարդերը նույնպես Ադրբեջանի պատմաբաններն ու մտավորականներն այժմ օգտագործում են հակառուսական և հակահայկական քարոզչության նպատակով:

1918-1920 թթ. երիտթուրքերի և քեմալականների կողմից հրահրած հայաստանաբնակ թուրքերի հուզումների դեմ Հայաստանի Հանրապետության ձեռնարկած միջոցառումները, ինչպես նաև ցեղասպանությունից փրկված հայերի վերաբնակեցումը Հայաստանի Հանրապետությունում թուրք-ազերիների կողմից ներկայացվում է որպես հակաթուրքական միջոցառումներ:

Խոսելով հայերի և ադրբեջանցիների վերաբնակեցումների հակաադրբեջանական բնույթի և ուղղվածության մասին՝ Ադրբեջանի գիտնականներն ու մտավորականները իրենց ուշադրությունը սևեռում են հատկապես 1946-1948 թթ. սփյուռքահայերի Մեծ հայրենադարձի և, ըստ նրանց, դրանով պայմանավորված 1948-1952 թթ. հայաստանաբնակ ադրբեջանցիների «բռնագաղթ»-ի վրա: Նրանք չեն խորշում 1988 թ. հայաստանաբնակ ադրբեջանցիների վերաբնակեցումը համարել ադրբեջանցիների նկատմամբ հայերի կողմից կազմակերպված ցեղասպանության քաղաքականության շարունակություն:

«Историческая география Западного Азербайджана» ժողովածուում անդրադարձ կա սփյուռքահայերի Մեծ հայրենադարձին և ադրբեջանցիների գաղթին (1948-1953 թթ.): Այս ժողովածուում սփյուռքահայերի հայրենադարձությունը ներկայացվում է ադրբեջանական տարբերակով: Այն է՝ 1943 թ. երեք տերությունների (ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի- Ն.Ս.) ղեկավարների Թեհրանի կոնֆերանսում հրանահայերը դիմում են Մոլոտովին՝ խնդրելով թույլատրել տեղափոխվել ԽՍՀՄ: Վ. Մոլոտովը նրանց խնդրանքը համաձայնեցնում է Ստալինի հետ: Այդ հանգամանքից օգտվում է ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Հարությունյանը և Ստալինի միջոցով կազմակերպում է Հայաստանի ադրբեջանցիների բռնագաղթը»[1]:

Այս դատողությունը նույնպես ոչ միայն տրամաբանական չէ, այլև՝ անհեթեթ: Թուրք գիտնականները նման դատողություններով իրար գերազանցում են: Օրինակ, վերը նշված նյութը այլ կերպ է ներկայացված «Беженцы» (1918-1920, 1948-1952, 1988-1989) ժողովածուում: Այսպես, «Հայերի հայրենադարձության գաղափարը ծագել է 1943 թ. երեք տերությունների ղեկավարների Թեհրանի կոնֆերանսում: ԽՍՀՄ արտգործնախարար Վ. Մոլոտովը, խորհրդա-իրանական հարաբերությունները քննելու ժամանակ, փորձելով աջակցել Իրանին (կրած վնասների դիմաց) առաջարկում է հրանահայերին բնակեցնել Ադրբեջանում»: Այստեղ բացի տրամաբանության բացակայությունից, առկա է նաև աղբյուրագիտական անճշտություն: Այնուհետև, տվյալ դատողության հեղինակը շարունակում է. «Սակայն Հարությունյանի և

[1] Նույն տեղը, էջ 47:

Ստալինի միջև կնքված գործարքով այդ պլանը փոփոխվել է, որոշվել է հրանահայերին բնակեցնել Հայաստանում, իսկ Հայաստանում բնակվող ադրբեջանցիներին՝ Ադրբեջանում»:

Ադրբեջանի գիտնականներն ու քաղաքագետները միակարծիք բողոքում էին, որ Հայաստանի լեռնային շրջաններում ապրող ադրբեջանցիներին Ադրբեջանի լեռներում բնակեցնելու փոխարեն Գ. Հարությունյանի պահանջով բնակեցրել են Կուրի բամբակամշակման վայրերում՝ հարթավայրերում, որը, ըստ հոդվածագրի, աքսորավայր էր[1]: Հեղինակը վերոհիշյալ շարադրանքից հետո գալիս է այն եզրակացության, որ բռնագաղթի ենթարկված ադրբեջանցիների բնակարաններում, ոչ թե հայրենադարձներով բնակեցնելն էր, այլ միազգային «Մեծ Հայաստան»-ի ստեղծումը[2]:

Այս տեսակետը կիսում են նշված ժողովածուի գրեթե բոլոր հեղինակները՝ Գուլու Կանգերլին, Բայրամ Բայրամովը և այլք: Իսկ Մամեդ Օրուդժի կարծիքով «հայ-մուսուլմանական կոնֆլիկտին վերջ կտրվի, եթե ռուսները ստիպված լինեն իրենց գիշատիչ ձեռքերը մաքրել Կովկասից, ինչպես այն տեղի ունեցավ Արևելյան Գերմանիայում[3]:

Կեղծիքն ակնհայտ է, քանի որ իրականությունն ապացուցում է հակառակը: Հայաստանաբնակ թուրքերին հիմնականում բնակեցրել են ապօրինաբար Ադրբեջանին անցած հայկական բնակավայրերում՝ ժողովրդագրական կազմը փոխելու նպատակով:

Այնուհետև նշված ժողովածուում կարդում ենք, որ ադրբեջանցիների «տեղահանության» առաջին որոշումը ընդունվել է 23.12.47 թ.՝ «Հայկական ԽՍՀ-ից կոլտնտեսականներին Ադրբեջանի Կուր-Արաքսյան դաշտավայր տեղափոխելու մասին»: Նշվում է նաև, որ երկրորդ փաստաթուղթը վերաբերում է առաջին որոշումը կատարելուն (10.03.48): Համաձայն տվյալ որոշման 1948 թ. պիտի տեղափոխեին 10,000 մարդ, 1949 թ.- 40,000, 1950 թ.- 50,000 մարդ[4]:

Նշվում է, որ գաղթին նախապատրաստվելու համար Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններին տրվում է ընդամենը մեկ ամիս: Այդ կարճ ժամկետի սահմանումը պայմանավորված էր ադրբեջանցիների տները հայրենադարձներով բնակեցնելու հետ[5]:

Հայաստանից Ադրբեջան տեղափոխված ադրբեջանցիների թվաքանակը նույնպես կեղծվել է: Վերոհիշյալ 100 հազար թվի դիմաց ադրբեջանական http://karabakh-doc.azerall.info կայքի ''Информация о массовой депортации азербайджанцев с их исторической и этнической земли на территории Армянской ССР. 1948-1953 года'' հոդվածում ցույց է տրված 53 հազար բնակիչ: Ընդ որում 1948-1950 թթ. Ադրբեջանում վերաբնակվել են 34.383 ադրբեջանցիներ[6]: Մինչդեռ Ս. Ասադովը իր նշված հոդվածում ադրբեջանցի վերաբնակիչների թիվը հասցնում է 100 հազարի[7]: Եթե այդ աստիճան ստահոդ վիճակագրական տվյալներ են շրջանառության մեջ դրվում, նշանակում է

[1] Беженцы... Баку, 1992, էջ 133:
[2] Նույն տեղը, էջ 135:
[3] Նույն տեղը, էջ 295:
[4] Տե՛ս Историческая география Западного Азербайджана, 1998, стр. 47:
[5] Նույն տեղը:
[6] http://karabakh-doc.azerall.info/ru/articls/artc018.htm:
[7] Беженцы ... 1992, стр 134:

դրան տոն են տալիս Ադրբեջանի իշխանությունները, այսինքն սուտն ու կեղծիքը բարձրացվում են պետական մակարդակի:

Հակահայկական քարոզչության ոլորտում այժմ հայտնի գիտնական, Բաքվի համալսարանի պրոֆեսոր Ջամիլ Գասանլին նույնպես անդրադառնում է սփյուռքահայերի 1946-1948 թթ. հայրենադարձությանը իր «СССР-Турция» (М., 2008 г.) գրքում: Արտասահմանյան հայերի խնդիրը նա քննարկում է ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացվող հայկական տարածքների պահանջատիրության շրջանակներում: Ներկայացնելով հայերի թիվը արտասահմանյան երկրներում՝ ոչ մի խոսք չի ասում, թե ինչպես են հայերը հայտնվել աշխարհի տարբեր երկրներում, սակայն բերելով Հայկական հարցին վերաբերող արխիվային փաստաթղթերը՝ կարծես ամեն ինչ ասում է: Այս գիտնականը տարբերվում է մյուս ազերի գիտնականներից նրանով, որ փորձում է իր ասելիքը հիմնավորել փաստերով, այլ ոչ թե հենց այնպես, ստելով: Խոսելով 1946-1948 թթ. հայերի հայրենադարձության մասին՝ կատարում է հետևյալ եզրահանգումը. «1946-1948 թթ. Մեծ հայրենադարձությունը խոր հետք թողեց հայության ճակատագրի վրա, բայց հայրենադարձության ծրագիրը չարդարացրեց Կարսին, Արդահանին և Արդվինին տիրելու հույսերը, և դրա համար վճարեցին Հայաստանում ապրող ադրբեջանցիները»[1]: Որպեսզի հայրենադարձներին Հայաստանում տեղավորեն, բարելավեն նրանց բնակարանային-կենցաղային հարցերը, -շարունակում է Գասանլին, Ստալինը 1947 թ. դեկտեմբերին Հայաստանից արտաքսեց 100 հազար բնիկ ադրբեջանցի: Նա Ստալինին մեղադրում է նաև Սև ծովի ափերից ու Ղրիմից թուրքերին աքսորելու համար[2]: Նա հավանաբար օգտվել է այն հանգամանքից, որ եթե իրենց թաթար են անվանում, ապա ինչու ինքը չի կարող Ղրիմի թաթարներին թուրք անվանել, քանզի Սև ծովի ափերից ու Ղրիմից Ստալինը աքսորել է հիմնականում թաթարներին և հայերին: Գասանլին Մոսկվայում 2006 թ. հրատարակած «СССР-Иран» գրքում զգալի տեղ է հատկացնում ոչ միայն Թուրքիայում գտնվող հայկական տարածքներին, այլև Ղարաբաղի և այլ տարածքների շուրջ անդրկովկասյան հանրապետությունների միջև առաջացած հակասություններին, ինչպես նաև «Հարավային Ադրբեջանի» ստեղծման Ստալինի շինծու ծրագրին:

Նա կարծես չի ժխտում, որ Հայաստան անունով երկիր կա, սակայն իր գրքի ներածականում անամոթաբար գրում է. «Արաքս գետից հյուսիս ընկած տարածքները Հյուսիսային Ադրբեջանն է, իսկ հարավ՝ Հարավային Ադրբեջանը»: Այնուհանդերձ, ռուսալեզու ընթերցողը կարդալով նրա նշված գրքերը՝ կարող է լիովին պատկերացում կազմել 1915 թ. Հայոց ցեղասպանության, դրանով պայմանավորված Հայկական հարցի ու սփյուռքահայերի հայրենադարձության պատճառահետևանքային կապերի մասին: Ջ. Գասանլին տեղյակ է նաև ՀՀ ազգային արխիվի 1945-1953 թթ.՝ Հայկական հարցին և հայրենադարձությանը վերաբերող արխիվային նյութերին:

Ադրբեջանի գիտնականները պատճառահետևանքային կապեր են տեսնում 1946-1948 թթ. Սփյուռքահայերի հայրենադարձության, 1948-1953 թթ. հայաստանաբնակ ադրբեջանցիների բռնագաղթի և Ղարաբաղյան հիմնահարցի միջև: Այո՛, կապերն առկա են: Սակայն այս կապերի ետնախորշերում անգամ նրանք իրենց ծեռնտու եզրակացություններն են անում: Արիֆ Յունուսովը իր «Ադրբեջանցիների 1948-1952 թթ. արտաքսումը Հայաստանից» հոդվածում անդրադառնալով արտասահմանյան երկրներում ապրող հայերի (130 հազար) հայրենադարձության խնդրին՝ գրում է, որ Հայաստանի կուսակցական առաջնորդ Գ. Հարությունյանը նամակով դիմել է Ստալինին ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու հարցով:

[1] Дж. Гасанли, СССР-Турция, 2008, стр. 622:
[2] Նույն տեղը, էջ 623:

Ադրբեջանի կոմկուսի քարտուղար Մ. Բագիրովը առաջարկում է կատարել տարածքների փոխանակում. հիմնականում ադրբեջանցիներով բնակեցված Շուշիի շրջանից բացի ԼՂԻՄ-ի մնացած տարածքը հանձնել Հայաստանին, փոխարենը Ադրբեջանին սահմանակից գլխավորապես ադրբեջանցիներով բնակեցված Հայաստանի երեք շրջանները տալ Ադրբեջանին (հավանաբար նկատի ունի Մեղրին, Գորիսը, Սիսիանը, որոնցում բնակվող ազերիները մեծամասնություն չեն կազմել-Ն. Ս.): Ըստ Յունուսովի այդ տարբերակը հայերին ձեռնտու չէր, հետևաբար նրանք գերադասեցին առժամանակ հանել ԼՂԻՄ-ի հարցը և վերջնականապես լուծել «ադրբեջանական հարցը» Հայաստանում: Այս հարցում Հայաստանի ղեկավարությունը աջակցություն ստացավ Ստալինից: «Ժողովուրդների հոր» ձեռքով 1948 թ. Մարտի 10-ին ստորագրվեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի № 754 որոշումը՝ Հայաստանից ադրբեջանական ազգաբնակչությանը Ադրբեջանի ԽՍՀ-ի Կուր-Արաքսյան դաշտավայր տեղափոխվելու միջոցառումների մասին: Դրան համապատասխան ավելի քան հարյուր հազար մարդ կամավորական սկզբունքով երեք տարվա ընթացքում Հայաստանի լեռնային շրջաններից (Ազիզբեկովի, Եղեգնաձորի, Սիսիանի, Վեդու) վերաբնակեցնել Միլ-Մուղանի անջրդի անապատում:

Այնուհետև հեղինակը շարունակում է. «Նշված որոշման 11-րդ հոդվածով պարզաբանված էին որոշման իսկական պատճառները»: Այն է՝ «Թույլատրել Հայաստանի ԽՍՀ Մինիստրների խորհրդին ադրբեջանական ազգաբնակչությունից ազատված շինությունները և բնակելի տները օգտագործել Հայաստան եկած արտասահմանյան հայերին բնակեցնելու համար[1]:

Որպեսզի պարզ դառնա Ադրբեջանի գիտնականների կեղծարարությունը, հարկ ենք համարում ներկայացնել 1946-1948 թթ. սփյուռքահայերի հայրենադարձության հետ առնչվող Ղարաբաղի հիմնահարցի արծարծումները: Երբ ակնհայտ դարձավ, որ Կարսն ու Արդահանը ԱՄՆ-ի և Անգլիայի աջակցությամբ Թուրքիան չի վերադարձնում Խորհրդային Հայաստանին, Հայաստանը, օգտագործելով այս առիթը, բարձրացրեց Նախիջևանի և Ղարաբաղի խնդիրները: Հարցի լուծմանը փորձեց ընթացք տալ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանը: Նա այդ հարցը բարձրացրեց Ստալինի առաջ՝ պատճառաբանելով, որ Հայաստանը ի զորու չէ տեղավորել բոլոր հայրենադարձներին, ուստի նպատակահարմար է հիմնականում հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղը միավորել Հայաստանին: Ստալինը դեմ չէր, եթե համաձայնվեր Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Մ. Բագիրովը[2]: Վերջինս որպեսզի կանխի Ղարաբաղի և Նախիջևանի վերադարձը Հայաստանին, առաջարկեց Հայաստանից ադրբեջանցիներին տեղափոխել Ադրբեջան, որոնց բնակարաններում կարելի կլինի տեղավորել Սփյուռքից հայրենադարձված հայերին: Այդ առաջարկությունն արժանացավ Ստալինի հավանությանը: ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Հարությունյանին ոչինչ չէր մնում անել, քան համաձայնվել: Երկու հանրապետությունների ղեկավարները միասին նշված առաջարկով դիմում են Ստալի-

[1] Арифф Юнусов., Депортация азербайджанцев из Армении в 1948-1952 годах, http://www.anl.az/el/q/qarabag 6/q-49.htm 14,07,2008:
[2] Ա. Վիրաբյան, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Ե., 2001, էջ:

նին[1]: Այդ դիմումում ասվում էր, որ Մինգեչաուրի համակարգի կառուցման պատճառով զգալի մշակելի տարածքներ կրճատվելու են: Միաժամանակ բամբակ մշակող տնտեսություններում զգացվում է աշխատող ձեռքերի պահանջ, մինչդեռ հարց է դրված ավելացնել բամբակի արտադրությունը: Առաջարկվում է հայաստանաբնակ ադրբեջանցիներին (130,000 մարդ) տեղափոխել Ադրբեջանի նշված շրջանները: Ընդգծվում էր, որ ժողովրդագրական այս շարժը նպաստավոր պայմաններ կստեղծի արտասահմանյան երկրներից հայրենադարձվող հայերին տեղավորելու համար: Ուստի նրանք Ստալինից խնդրում են արտոնել՝ «1. Հայկական ԽՍՀՄ-ում բնակվող ադրբեջանցիներին վերաբնակեցնել Ադրբեջանի սակավ բնակեցված բամբակագործական շրջաններ: Ազատված հողերը և բնակարանները օգտագործել արտասահմանյան երկրներից Հայկական ԽՍՀ վերադարձող հայերին ընդունելու և տեղավորելու համար: 2. Թույլատրել Ադրբեջանի ԽՍՍՀ և Հայկական ԽՍՍՀ Մինիստրների խորհուրդներին ստեղծելու հանձնաժողով՝ մշակելու վերաբնակեցման կարգն ու պայմանները, ինչպես նաև իրականացնելու վերաբնակեցման ղեկավարումը: 3. Այդ միջոցառումների իրականացման ծախսերը կատարել միութենական բյուջեից»[2]: 1948-1952 թթ. հայաստանաբնակ ադրբեջանցիների վերաբնակեցման միջոցառումը իրականացվեց ի վնաս Հայաստանի և հայ ժողովրդի հետևյալ պատճառներով.

1. Հայաստանում բնակվող ադրբեջանցիների հիմնական զանգվածը բնակեցվեց ոչ թե Ադրբեջանի բամբակագործական, այլ հայահոծ շրջաններում՝ փոխելով հայկական շրջանների ժողովրդագրական կազմը:

2. Ադրբեջանը ԽՍՀՄ պետբյուջեից ստացավ մեծ ֆինանսական միջոցներ:

3. Հայաստանից Ադրբեջան վերաբնակեցված ադրբեջանցիների զգալի մասը վերադարձավ նախկին բնակավայրեր, որտեղ Հայաստանի իշխանություններին այդպես էլ չհաջողվեց բնակեցնել հայրենադարձներին, քանզի հայրենադարձները մինչև 1948 թվականն արդեն տեղավորվել էին, թեկուզ վատ պայմաններում:

4. 1946-1948 թթ. Հայաստան եկած մոտ 90,000 հայրենադարձներին տեղավորելու շարժառիթով Ղարաբաղի և Նախիջևանի խնդիրները լուծելու Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Գ. Հարությունյանի փորձը ձախողվեց՝ Ստալինի չկամության և Ադրբեջանի Կոմկուսի առաջին քարտուղար Մ. Բագիրովի հայաստանաբնակ ադրբեջանցիներին Ադրբեջան վերաբնակեցնելու խորամանկ խաղով: Չնայած դրան՝ Ղարաբաղի և Նախիջևանի հիմնահարցերը օրակարգից չհանվեցին:

Սա է ողջ ճշմարտությունը: Մինչդեռ թուրք հեղինակները, ինչպես ասացինք, այն կարծիքին են, որ 1946-48 թթ. սփյուռքահայերի հայրենադարձությունը մտացածին էր, Գ. Հարությունյանի և Ի. Ստալինի գործարք՝ Հայաստանից ադրբեջանցիներին արտաքսելու և միազգային Մեծ Հայաստան ստեղծելու համար:

Ադրբեջանի գիտնականներն ու մտավորականները ճշմարտությունը կեղծելու ճանապարհով ցանկանում են նոր լիցք հաղորդել Ադրբեջանի և Թուրքիայի հակահայկական, հակառուսական և հակաիրանական քարոզչամեքենաներին՝ հիմնավորելու և արդարացնելու պատմական Հայաստանի և Փոքր Ասիայի տարածքներում թուրքական երկու ցեղասպան պետությունների ստեղծումն ու գոյությունը, ինչպես նաև՝ ոտնձգությունները Իրանի տարածքային ամբողջականության նկատմամբ:

[1] ՀՀԱ, ֆ. 1, ց. 27, գ. 47, թ. 137-138:
[2] Նույնը:

Норик Саргсян, Азербайджанская фальсификация репатриации армян Спюрка 1946-1948 гг. - Азербайджанские историки и интеллигенция активизировали процесс фальсификации истории. Они претендуют к территориям Армении и Ирана. Основой для такой фальсификации являются: 1. Административное территориальное несправедливое деление Закавказья царской Россией и неправовые антиармянские турецко-советские договора. 2. Присутствие в Атропатенах тюркского этноса. 3. Переселение армян и репатриация армян Спюрка в 1946-1948 гг, а так же переселение азербайджанцев из Армении в Азербайджан в 1948-1952 гг. Данная статья относится к третей предпосылке. В статье мы раскрыли сущность проблемы и пришли к выводу, что разрешение карабахской проблемы по поводу репатриации армян Спюрка провалилась в связи с переселением азербайджанцев из Армении в Азербайджан.

Norik Sargsyan, The Azerbaijani Falsification of Armenians' Repatriation from Spyurq (in 1946-1948). -The history falsification process is being activated by Azerbaijani historians and intellectuals conditioned by the Nagorno Karabakh problem. They have some pretensions to the territories of Armenia and Iran. The bases for that falsification are considered to be 1. the unfair administrative divisions of Tsarist and then Soviet Russia, the anti – Armenian Soviet-Turkish illegal agreements, 2. the existence of Turkish ethnics in Atrpatakan, 3. Armenians' transmigration and the repatriation of Armenians from Spyurq (in 1946-1948).

The current article is about the third prerequisite. In the article we revealed the problem and came to the following conclusion. While the repatriation of Azerbaijani in 1948-1952 prevented Nagorno Karabakh to join Armenia, the most of Azerbaijanis later returned to Armenia.